

1 MAR 2010

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԱՐԳԱՐ ՅԱԿՈՐԵԱՆԻ

(Զարջոյի վաճառական)

Մ Ե Ր

Հ Ո Գ Ս Ե Ր Ը

Կ Ա Ջ Մ Ե Ց

ԳԱՐԵԳՐԻՆ ՔԱՀ. ԱՍՐԵԱՆ


Թ Ի Յ Լ Ի Ջ

ԵՆԵՏՐԱՆԱԲ ՏՊ. ՕՐ. Ն. ԱՂԱՆԵԱՆԻ. ՊՕԼՈՒ 7.
1910

61
-76

175 FEB 2013

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՐԹԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐԱԼ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՐԹԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՐԹԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ



ՉՕՆՈՒՄ Է ՀԵՂԻՆԱԿԸ

ԵՐԱԽՏԱԳԷՏ ՍՐՏՈՎ

ԶԱՐԶՈՅԻ ՎԱՃԱՌԱԿԱՆ

ԱՐԳԱՐ ԽՐԻՍՏՕՑԾՐՈՎԻԶ
ՅԱԿՈՒԵԱՆԻՆ

Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Ով ուզում է իր առողջ ժամանակ կտակ անել՝ գրքոյկս մեծ ծառայութիւն կարող է մատուցանել այդպիսի խելացի մարդկանց:

Գրքոյկիս մէջ կտակների մի շարք ձևեր են շօշափւած, որոնց իրազործումով առաջ կերթայ հայ ազգը: Կազմելիս ի նկատի եմ առած այն հանգամանքը թէ՛ ինչպէս հայկական կեանքը ներկայիս մի անկերպարան դրութիւն է ստացած: Տիրող հասկացողութիւնները մեծ չափով արգելք են հանդիսանում հայ ժողովրդին կուլտուրայէս զարգանալու:

Ազգային հաստատութիւնները դուրս են սխալ հիմքերի վրայ, միանգամայն միակողմանի, որոնք դանդաղեցնում են հայ ժողովրդի յառաջադիմութիւնը: Բարեփոխելով այդ հաստատութիւնների կանոնադրութիւնները, կը բարեփոխուեն և հայ ժողովրդի կենցաղը և հայեացքը, կտան նրան այն՝ ինչով նա կարող է իր ապագան բարելաւել:

Գրքոյկս թող իւրաքանչիւր հայի սեղանի զարդ լինի: Նրա միջի գաղափարները թող իւրացնէ ամեն մի հայ, ղեկավարուէ այն միջոցներով, որոնց մասին գրւած է երկիս մէջ, որից հայ մարդը շատ բան կշահի, նոյնպէս և մեր ազգային հաստատութիւնները:

Ընթերցողի ուշադրութիւնն եմ հրաւիրում մի ցաւալի հանգամանքի վրայ, որ առհասարակ հայերիս մէջ ընդունւած է: Եթէ մի գրքի հեղինակ չէ պատկանում որեւէ մի հայկական խմբակի և ինքն էլ համալսարանի հոտ չէ առած, անշուշտ, այդպիսի մարդուն քիչ կը գտնուին ջատագովողներ... Աւելին թողնում եմ արդարամիտ ընթերցողների խղճին:

Պ. Բ. Աւերեան

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Ում չէ յայտնի հայ ժողովրդի ծով կարիքներն ու պահանջները ու այն կտակները, որոնք արուած են մինչև այժմ. դժբաղդաբար նոցանից ոչ մէկը բաւարարութիւն չէ տալիս հայ գիւղացու, հայ աշխատաւոր դասակարգի կարիքներին ու հոգսերին:

Հայ ժողովրդի ամենաթարմ տարրը—հայ գիւղացիութիւնն ու աշխատաւոր դասակարգը և խեղճ արհեստաւորը ցարդ աչքաթող է արուած հայ հարստից. նա զգալի կերպով և բաւական մեծ չափերով դէպի ոչնչութեան է դիմում: Նա լնյս ու գրագիտութիւն է պահանջում, որպէսզի կարողանայ ժամանակակից հասկացողութեամբ զարգանալ, կուլտուրապէս բարձրանալ ու կանգնել այն մակարդակի վերայ, որ ցանկալի, փափագելի է:

Ո՛վ չ'գիտէ, որ հայ գիւղացին տգէտ է, մասնուած այնպիսի պայմանների, որոնք ոչ մի ժամանակ չեն կարող ամօքել նրա դառն կացութիւնը, չեն կարող բարձրացնել նրան ազնուացնել ու կեանքի համար օգտակար մարդ դարձնել:

Այսպիսի հանգամանքների մէջ՝ նա օգնութեան ձեռք է մեկնում հայ ունևորին, օգնութեան ձեռք պարզում դէպի այն մարդիկ, որոնց համար հազարները գին ու արժէք չունեն այն դէպքում—երբ հարցը գալիս է իրանց կաշին պարարտացնելուն, իրանց անզուսպ կրքերին յագուրդ տալուն:

Եթէ հարուստ հայը մի ըրպէ մտածէր, որ մահն անխուսափելի է իր համար և բոլոր ժամանակ Դամոկլեան

սրի պէս ցցուած գլխին, անշուշտ, պիտի սթափուէր այդ մարդը, պիտի զգաստանար, որ մարդուս համար կայ մի այլ կեանք, բարոյական մի կեանք, որն անձնուիրութիւն և անձնագոհութիւն է պահանջում:

Երբ մարդիկ սահմանափակուէին միմեայն իրանց մասին մտածելով, իրանց շահերին հետևելով՝ այն ժամանակ կեանքի անիւր կը փշրուէր, առաջադիմութիւնը կը կանգնէր:

Սակայն այլ է ժամանակակից գիտութեան հայեացքը, այլ է ժամանակակից գաղափարների թելադրութիւնը:

Գիտութիւնն ու գեղարուեստը արծուի թևեր առած՝ հսկայական թռիչքներով առաջ են գնում: Արհեստի բոլոր ճիւղերը ծաղկած՝ խունկի անուշ հոտ են բուրում: Բայց ի՞նչ... Այս բարիքներից, այս տուրքերից միանգամայն զուրկ է հայ գիւղացին, հայ աշխատաւոր դասակարգը:

Իժմադր ժողովուրդ, անմխիթա՛ր հայ գիւղացիք, որ առաջադիմելու բոլոր յարմարութիւններից զուրկ էք, որ գիտութեան հրաշալիքները ընդգրկելուց շատ հեռու էք կանգնած:

Այսպէս թողնելը անպատուաբեր է հայ հարստին, ֆեոսակար հայ գիւղացու, հայ աշխատաւոր դասի համար:

Արդ՝ ի՞նչ անել, ի՞նչպէս մտածել, որ կարելի լինէր տիրող հասկացողութիւնը բարեփոխել, միջավայրը բարձրացնել:

Շատ ցաւալի է, որ մի ժողովուրդ իր երջանկութիւնը պիտի գտնէ կապիտալի և առանձնապէս կապիտալիստի մէջ: Ժողովուրդը իր ոյժերով պէտք է աշխատէ առաջ երթալ, իր ընկած դրութիւնից ազատուել:

Աւելորդ է խօսել այն պատճառների մասին, որով մեր ժողովրդի աշխատաւոր մասսան ու գիւղացիութիւնը ընկած է խորին տգիտութեան մէջ: Այդ պատճառներն են՝ սակաւահողութիւնը, անհողութիւնը, մեծ մասամբ իրաւագրկութիւնն ու զեմստվոյի բացակայութիւնը: Վեր-

ջապէս, արուեստական միջոցներից զուրկ լինելու պատճառներից է պահպանում ժողովրդի այդ տգիտութիւնը, որն աւելի մեծ յանցանք է ու ֆեոսակար պետութեան շահերին:

Առհասարակ եթէ ժողովուրդը աղքատ է, տգէտ է, սովամահ է, այդպիսի ժողովրդից բաղկացած տէրութիւնը չէ կարող զօրեղ և առողջ լինել:

Կապիտալը մեծ դեր է խաղում մարդու կեանքի մէջ: Նա ստեղծում է աշխատաւոր մարդկանց ձեռքերով: Բայց ինքը, աշխատաւորը շատ չնչին մասն է ստանում, թէպէտ նա պէտք է ստանար գոհացուցիչ մասը՝ սակայն իրականութեան մէջ այդպէս չէ լինում:

Կը գայ ժամանակ, երբ կապիտալը այդքան մեծ դեր չէ կարող խաղալ: Իւրաքանչիւր աշխատաւոր՝ համաձայն իր թափած աշխատանքի, կստանայ լի բաւարարութիւն: Այսպիսով բոլոր աշխատաւոր մարդիկ բաւարարութիւն կը ստանային համամարդկային երջանկութեան մէջ: Դեռ ևս դարեր պէտք է անցնեն, որ այդ անողորմ թագաւորը, ինչպիսին է կապիտալը, չը փայփայուի և անյետ կորչի: Այդ դաժան թագաւորը, որ ամեն բան ստրկացնում, ամեն բան ոչնչացնում է: Թէև ստեղծագործութիւնները մեծ են, դժբաղդաբար մարդկային ոյժի ոգին փոքրանում և անյետանում է գորա առաջ:

I. Յարդ եղած կսակների մասին

Խելացի, մտածուած, ժամանակակից ոգուն համապատասխանող կտակները հայ ժողովրդի շունչն ու հոգին են:

Առհասարակ մարդուն պէտք է օգնել մինչև ընկնելը. բարեգործութիւնը պէտք է լինի մինչև մարդու ընկնելը: Այդպիսի կտակները թէ կարգարացնեն հայ ժողովրդի ներկայ պահանջները և թէ հայ բարեգործի ամբողջ յոյսերը:

Երկու խօսքով ուրուագծենք ցարդ եղած հայ բարեգործի կտակները և կը տեսնենք, որ նոքա իրանց բովանդակութիւններով քիչ թէ շատ ծառայել են հայ ժողովրդի կարիքներին, բայց լիովին չեն արդարացրել կտակողի իղձերը, ու այն ճանապարհը, որ մեր կարծիքով հարթած պիտի լինէր այդ կտակներով—այսինքն այդ կտակները արմատապէս պիտի բարեփոխէին հայ ժողովրդի կեանքը. դժբաղդաբար այդպէս չէ. ցաւալի կեանքը նոյնն է քնացած, մեր աչքով ամեն օր տեսնում ենք:

Առողջ միտքն ու դատողութիւնը պահանջում է, որ կտակը արուի մարդուս կենդանութեան ժամանակ, նրա առողջ ժամանակ և ոչ թէ մահուանից մի քանի ժամ առաջ:

Ասացէք խնդրեմ, ի՞նչ հասկացողութիւն է, կամ ի՞նչ միտք ունի այն կտակը՝ երբ հիւանդը մահուան ուրուականի երեսը տեսած, համոզում կամ աւելի ճիշտն ասած, հարկադրում են վերջինիս շրջապատողները, իր կարողութիւնից մաս հանել հասարակական զանազան հաստատութիւններին:

Նա, այդ մահուան դուռն ընկած հիւանդը, համաձայնում է և ահա կտակը պատրաստ է: Սակայն ի՞նչ է ներկայացնում այդպիսի կտակը—թերութիւններով հիւսուած, մի երկու բոպէի մտածողութեան արդիւնք, չոր ու ցամաք կազմած մի քանի յօդաձևերի շղթաներ, որոնցից շատ անգամ ոչինչ չէ լինում հասկանալ:

Վերցրէք Օթարեանի կտակը, ծանօթացէք այդ կտակի հետ և դուք զարմացքից կապշէք թէ՛ որչափ մարդիկ անձնահաս են օգտաւէտ կտակներ անելու մէջ:

4—5 տարի առաջ՝ հանգուցեալ Օթարեանը մահուան անկողնում պարկած, ցանկանում է իր հայրենի քաղաքին—հիւսիսային Կովկասում գտնուող Մօզդօկ քաղաքի հայ ժողովրդին բարութիւն անել: Նա կտակում է 100,000 ռուբլի այդ հասարակութեան, որից գոյացած տոկոսները պէտք է բաժանել քաղաքի ամենաաղքատ հայերին: Ու-

րեմն, տարեկան 4000 ռուբլի փողը պէտք է բաժանել Մօզդօկի չքաւոր հայ ընտանիքներին:

Միթէ տարեկան 2 անգամ 5 ռուբլի ստացող Մօզդօկի հայ աղքատը կարող է իր վիճակը բարելաւել. միթէ այդ փողերը բաշխելով կարելի է աղքատ հայերի թիւը Մօզդօկում հետզհետէ փոքրացնել— Ո՛չ:

Այլ խնդիր է, երբ այդ դրամագլխի տոկոսով Մօզդօկի հայ ազգաբնակութեան զաւակները հնարաւորութիւն ունենային ուսում ստանալ, կարելի լինէր հող գնել, աշխատանաց տներ հիմնել, աղքատ արհեստաւորներին մանր փոխառութիւն տալ, գիւղերում գիւղատնտեսական հանրօգուտ գործիքներ մատակարարել և այլն, և այլն, որով թէ աղքատների թիւը օրէց-օր կպակասէր Մօզդօկում, և թէ Մօզդօկի հայ ժողովրդին մուրացկանութեան արհեստին ընտելացնելուց կփրկէին:

Ահա ձեզ մի խոշոր կտակ, որ չի ծառայում հայ ժողովրդի ներկայ պահանջներին: Այսպիսի թերութիւններ ունին և ուրիշ շատ կտակներ:

Երբ հարուստ հայը ապրում է նոյն միջավայրում, ուր ապրում է և նրա աղքատ եղբայրը, երբ հարուստ հայը խղճահարում է իր աղքատ եղբօր կացութեան վրայ կամ ազգային այնպիսի հաստատութիւնների վրայ, որոնք ոչընչանալու շէմքին են կանգնած, երբ հարուստ հայը տրամադրում է իր կոպէկներով աղքատի արցունքը սրբել, ազգային հաստատութիւնները կորստից ազատել—այն ժամանակ նա պէտք է իր կենդանի աչքով տեսնէ այն դուրմարի արդիւնքը, որ նա կտակել է մի բարի նպատակի:

Բարոյական հայը, հոգով հարուստ հայը պէտք է իր մարդկային ս. պարտականութիւնը կատարէ միայն և միայն իր կենդանութեան ժամանակ:

Աշխարհումս ամենաառաջին երջանկութիւնը նրա մէջ է, երբ մարդս ապրում է ոչ թէ իր համար, այլ ուրիշի համար: «Միբիր ընկերոջդ, ինչպէս քեզ ես սիրում»: Մարդու համար սրանից բարձր գաղափար, բարձր նպատակ չկայ:

Միայն բարի անունը, կենդանի գործն է փրկում այն մարդին, որ գիտէ իր անցաւոր կեանքը գնահատել, իր ամբողջ ժամանակ բարեգործութիւն անել:

Հարստութիւնը երկայրի սուր է: Ոմանց համար նա բարիքների անսպառ աղբիւր է, իսկ ոմանց համար կատարեալ դժբաղդութիւն, որից չեն կարող ազատուել մեր հոգեպէս նիրհող հարուստները:

Այն անվերջ աղաղակը, այն անվերջ անէծքը, որ թափում է հայ ազգը իր հարուստ անդամի գլխին, գեղեցիկ խթան է մեր հոգով աղքատ ունեւորների համար:

Հայ ազգի հարուստ աղաները պէտք է շտապեն իրանց լուծան ձգել հայ ազգի լուսաւորութեան և կուլտուրական գործի զբաւարկղը, որից յետոյ միայն իրանց խիղճը մաքրած կլինեն:

Պէտք է ցանել, որ կաշելի լինի հնձել, պէտք է օգնել, որ կարելի լինի գործ պահանջել, հայ ազգի թարախոտ վէրքերը բուժել:

Կարիքը մեծ է, ցաւը համատարած. աշխատենք ազատել հայ գիւղացուն ճորտական դրութիւնից, աշխատենք փրկել հայ աշխատաւոր մասսային, որ նա ցարդ իրաւագուրկ է մնացել ամեն կողմից:

Սուաշարկում ենք մի շարք կուլտուրական գործեր, որոնց առթիւ կարող են հայ հարուստները իրանց կենդանութեան ժամանակ կտակներ անել: Ահա դոքա:—

II. Կովկասի Հայոց Բարեգործ. Ընկերութեան Էութիւնը

Կովկասի Հայոց Բարեգործական ընկերութեան վերաբացումը փայլուն ապագայ է խոստանում հայ ժողովրդին:

Այդ ընկերութիւնը բացարձակապէս կարող է լրացնել մեր գիւղացու, աշխատաւոր մասսայի պահանջները, երբ հայերս ըմբռնենք այդ ընկերութեան լայն ծրագիրը:

Կովկասի հայոց բարեգործական ընկերութիւնը պէտք է իւր ճիւղերով շողկապէ սչ միայն քաղաքները, այլև

բոլոր հայաբնակ գիւղերը, որոնց մէջ պէտք է կուլտուրա և լուսաւորութիւն մտցնէ, իհարկէ, օրէնքի թոյլ տւած սահմաններում:

Կովկասի Հայոց Բարեգործական ընկերութիւնը կարող է բանալ դպրոցներ, գրադարան-ընթերցարաններ, անկեղանոցներ, որբանոցներ, ճաշարաններ, թէյատներ, արհեստագիտական ու տնայնագործական հիմնարկութիւններ, կաթնատնտեսական և մեղուաբուծական դպրոցներ, կարող է պահել միջնակարգու բարձրագոյն դպրոցներում սաներ, և այլն: Մի խօսքով՝ եթէ նա ունենայ նիւթական միջոց՝ կանէ այն բոլորը, ինչ որ կարևոր է ներկայ հայ ժողովրդի կուլտուրական յառաջ խաղացմանը: Նա կարող է մինչև անգամ մտցնել գեմստվոյի հիմունքները կօօպերացիայի միջոցով:

Ունենալ մի այդպիսի ազգօգուտ զբաւարկղ ու այնտեղ չձգել հայ մարդու լուծան, այդ աւելի քան ապշութիւն կլինի այն ազգի համար, որ կրում է իր ճակատին հայ անունը:

Բայց մի հարց, որ կարող է ամեն մարդու գլխում յղանալ.— այդ հիմնարկութիւնը ի՞նչով է ապահոված՝ որ դժբաղդ օրերի ենթարկւած դէպքում, հայ ժողովրդի կուլտուրան չկորչէին, հայութեան սեփականութիւն մնային:

Մենք համոզուած ենք, որ Կովկասի հայոց բարեգործական ընկերութեան վարչութիւնը կունենայ լայն հեռանկար. պէտք է ընկերութեան սեփականութիւնը ապահովագրէ մի այնպիսի հաստատութեան մէջ, որ ընդմիշտ երաշխաւորէր այդ սեփականութեան անձեռնմխելութեանը:

Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ այսուհետև հայ ժողովուրդը առատութեամբ կը օգնէ այդ ընկերութեան: Ընկերութեան զբաւարկղը մեծանալով կը մեծանայ և նրա գործունէութեան հօրիզոնը:

Սակայն մենք ցանկանում ենք, որ Կովկասի հայոց

բարեգործական ընկերութիւնը իր գործունէութիւնը առաջ տանէ որչափ կարելի է սիստեմատիքաբար:

Երբ մարդս անօթի է՝ նա չէ կարող ըմբռնել կուլտուրական միջոցները: Նա անկուլտուրական է, որովհետեւ աղքատ է: Նա աղքատ է, նա հիւանդ է, որովհետեւ սոգէտ է: Այսպիսով պատճառն ու հետեանքը ունեն մի արմատ, իրար հետ դարբնուած են:

III. Դ պ ր ո ց

Կարծում ենք և բոլորովին համոզուած ենք, որ ընդհանրապէս դպրոցի ժամանակակից խնդիրը — դա է ազգային դպրոցի պաղաբանումն ու ստեղծագործութիւնը, որ հեռու պէտք է լինի կանգնած այն կեղծ կլասիքական դպրոցից, որ արհեստական կերպով մեզանում հիմնաւորուած է:

Ստորին, միջին և բարձր դպրոցների մէջ պէտք է գոյութիւն ունենայ յաջորդական կապ:

Մեր դպրոցներում գլխաւոր տեղը պէտք է տալ բնական գիտութիւններին:

Նշանաւոր աստուածաբանների, փիլիսոփաների և գիտնականների աշխատութիւնները միաբերան վկայում են, որ իսկական գիտութիւնը չի հակասում կրօնին, որ գիտութիւնը հակակրօն չէ. բայց ատելութիւն դէպի գիտութիւնը, ճշմարիտ որ կրօնի դէմ է:

Թող լաւ ըմբռնէ այս տողերը մեր յետաճաց հայ հոգևորականութիւնը:

Յայտնի է, որ գեղարուեստը, բանաստեղծութիւնը և երաժշտութիւնը չեն ժխտում բնութեան ուսումնասիրութիւնը. միայն բնութեան ուսումնասիրութիւնն է հնարաւորութիւն տալիս ըմբռնելու գեղեցկութիւնը: Դպրոցներում բնական գիտութիւնների ուսումնասիրութիւնը զարգացնում է մանուկների յիշողութիւնը, ամրացնում

սիրոյ և արդարադատութեան զգացմունքը, ուսուցանում ինքնուրոյն մտածողութեան:

Մեր դարու խնդիրը կայանում է դպրոցներում բնական գիտութիւնների անթերի աւանդումն, որով մարդ դառնում է ուժեղ, ազնիւ և արի:

Լոյս և փրկութիւն... Այդ որչափ գրաւիչ խօսքեր են:

Զուր չէ, որ հնումն ազգերը աստուածացնում, երկրպագում էին լոյսին, որովհետեւ նրա սսկեշող ճառագայթները ներս թափանցելով ամեն խուլ անկիւն, վանում, հեռացնում էին այն թանձր խաւարը, որի մէջ մարդիկ այնչափ ահեղի գործեր էին կատարում:

Թողնենք լոյսի բարեբար ներգործութիւնը բուսական և կենդանական թագաւորութիւնների վրայ ու նրա տուած բազմաթիւ օգուտը՝ կանգ առնենք Յ. դարու պատմագիր Եղիշէի հետեւեալ խորհմաստ տողերի վրայ. «Լաւ է կոյր աչօք՝ քան կոյր մտօք»: — Լաւ է կոյր լինել աչքով՝ քան կոյր լինել մտքով:

Երբ մարդու միտքը խաւար է, նա արդէն կաշկանդուած է լուսաւորութեան առաջ: Լոյսի հակապատկերն է խաւարը: Այս երկու ախոյեանները բնութեան մէջ ունեն իրանց տարբեր դերերը, որոնցից մէկը զարթեցնում է շնչաւորին, իսկ միւսը քնեցնում նրան:

Եթէ ընդունենք, որ քնելն փոքրիկ նախադուռն է մահուան, ապա պէտք է ատենք խաւարը, որ նա մեզ դէպի քուն է մղում, մահուան կերպարանքը մեզ ցոյց տալիս:

Ինչքան մարդիկ ատում են մեռնելն ու խաւարը, նոյնչափ էլ սիրում են ապրելն ու լոյսը: Որչափ բացասական գոյներով են որահում խաւարի իշխանութիւնը, նոյնչափ դրական գոյներով են պատկերացնում լուսոյ թագաւորութիւնը:

Յիրաւի, կան մարդիկ, կան ազգեր, որոնք թէև օրցերեկով ապրում են, թէև լոյսի բարիքները այնքան առատութեամբ վայելում, այնուամենայնիւ նոքա քնած են,



նոցա մտաւոր աշխարհը մեռած է, նոցա գործերը յաւիտենական դատապարտութեան են մատնուած:

Մարդկային ազգի համար լուսոյ նկարը— նրա դրպրոցն է, որի միջից պիտի ստանայ անսպառ լոյս, կրթութիւն և դաստիարակութիւն— այն գորեղ գործօնները, որոնք միայն մարդուն իր կոչման բարձրութեան վրայ կը պահեն:

Հայ ժողովրդի մտաւոր աշխարհը խոր խաւարով է պատած: Հայ ժողովուրդը չունի ժամանակակից դպրոցներ, չունի ուսուցչանոցներ, չունի ժողովրդական ուսուցիչներ, որոնք վերածնէին նրա կեանքը, արդարացնէին այն յոյսերը, որ ժողովուրդը տածում է դէպի այդ անհրաժեշտ գործօնները:

Ի՞նչ ենք մենք, մտաւորապէս որչափ յետամնաց մի ազգ, խաւարի իշխանութեան մատնուած խեղճ ու կրակ մի ժողովուրդ՝ կոյր դէպի մեր շրջապատը, կոյր դէպի մեր բարոյական պարտականութիւնները: Հայ ժողովրդի յոյսերը կիրագործուեն այն ժամանակ, երբ կունենանք գոհացուցիչ թւով տարրական դպրոցներ, երբ կունենանք ժամանակի ուզուն համապատասխան դպրոցների տիպեր և պատրաստուած ոյժեր:

Ցարդ մենք ունեցել ենք ծխական միդասեան, երկդասեան ուսումնարաններ, մի քանի թեմական դպրոցներ և մի հատ էլ Գէորգեան ճեմարան:

Ինչպէս այդ դպրոցների օգուտը անկարելի է ժըխտել, այնպէս էլ դոցա անժամանակակից լինելը անկարող ենք ուրանալ:

Հայերիս այսուհետև հարկաւոր են ուրիշ տեսակ դրպրոցներ՝ այնպիսի դպրոցներ, ինչպիսին ունին Եւրոպական լուսաւոր ազգերը:

Եթէ առ այժմ անկարելի է ունենալ տարրական, միջնակարգ և բարձրագոյն դպրոցներ, գոնէ պէտք է տարրական դպրոցների թիւը բազմացնել, նոցա լրացուցիչ մասերը վերածել գիւղատնտեսական-տեխնիքական ճիւ-

1003
11437

ղերի: Այնտեղից դուրս եկած սանրակները, որոնք կապուած է հողի ու արհեստի հետ. կսիրէ նա այդ կեանքի եղանակը, աւելորդ ժամանակ չի վատնիլ քաղաք երթալու, միջնակարգ դպրոց մտնելու, իր կորցրած բախտը այնտեղ որոնելու:

Իրաց այսպիսի դրութեան մէջ՝ մեր տարրական դրպրոցների աշակերտներից շատ չնչին տոկոսն է միջնակարգ կրթութեան ձգտում. իսկ մեծ մասը մնում է գիւղում ու քաղաքում: Այնուհետև նա մատնում է անգործութեան, դատարկապօրտութեան, շւայտութեան, ծուլութեան և ամեն տեսակ ֆրասակար մոլութիւնների, որ միայն դրժբաղդութիւն է հայ ազգի համար:

Այնպէս որ, փոխանակ 4—5 տարի գրագիտութիւն ուսուցանելու, կարելի է մատաղ սերնդին 3 տարուայ մէջ գրագիտութիւն ուսուցանել, իսկ չորրորդ և հինգերորդ տարիները գիւղատնտեսութիւն և տեխնիքա (արհեստ) սովորեցնել:

Պէտք է լաւ հասկանալ, որ մտաւոր աշխատանքը առանց ֆիզիքական աշխատանքի, քաղցր և յարատև չէ:

Այսուհետև մեզ հարկաւոր չեն այնպիսի դպրոցներ որտեղ մատաղ սերունդը ամբողջ 4—5 տարի ուղեղ է մաշում, բայց դուրս գալիս կեանք առանց զէնքի:

Տուէք մեզ այնպիսի դպրոցներ, որտեղից դուրս եկած սերունդը առողջ հոգի ու մարմին ունենայ. կարողանայ հասկանալ կեանքի պահանջները. կարողանայ կըշռել իր շրջապատը. պատրաստութիւն ունենայ ժամանակի պահանջները իրագործել կեանքի մէջ:

Բնւ է, որչափ մատաղ հայ սերունդը ուսօպիս դպրոցներում եռանդ մաշեց: Փոխեցէք այդ դպրոցները կեանքի դպրոցի, հեռացրէք այն անմարս առարկաներն ու լեզուները, որոնք աշակերտին միայն ապուշ են դարձնում:

Թարմ գիտութիւններ մտցրէք դպրոց, բնագիտական, տեխնիքական առարկաներ մտցրէք դպրոց, գրաբառ լե-

զուն մեղմացրէք (թեմական դպրոցներում աւանդել միայն V և VI դասարաններում):

Ահա կեանքի, ժամանակի պահանջները, որ անողոք կերպով մեզ հարկադրում են մեր ուսումնարանների վիճակը բարեփոխել:

Եթէ ուզում ենք, որ հայ ժողովուրդը լուսաւորուի, կուլտուրապէս առաջ երթայ՝ պէտք է չխնայենք մեր կօպէկները ազգի լուսաւորութեան սուրբ գործին:

Ինչպէս ամեն մի հայ քաղցի և ծարաւի պահանջ է զգում իւրաքանչիւր օր, այնպէս էլ պահանջ պիտի զգայ լուսաւորութեան, գիտութեան և տեխնիքայի:

«Բանուկ ձեռքը չի մուրալ»—աշխատենք մեր ապագայ սերնդին սովորեցնել կեանքի քաղցր աշխատանքին, որ որչափ կազդուրիչ—նոյնչափ էլ սփոփիչ է:

Վերջացնելով մեր խօսքը հայոց դպրոցների մասին, դարձեալ կրկնում ենք, որ մեր տարրական դպրոցները պէտք է ունենան եռամեայ գրագիտական դասընթաց և երկամեայ գիւղատնտեսական-տեխնիքական նիւղեր:

Բացի սորանից, անհրաժեշտ է հայաբնակ մի քանի շրջաններում բանալ զուտ գիւղատնտեսական-տեխնիքական և տնայնագործական դպրոցներ, որտեղից աւարտածները կլինեն ուսուցիչներ մեր տարրական դպրոցներում:

Այսպիսով մատող սերունդը 5 տարուայ մէջ մօտաւորապէս զինուած կլինի գիտութեան պաշարով և գործնականապէս էլ կեանքի մէջ կլինի գիտակից, օգտաւէտ անդամ հայ ժողովրդեան, բարւոքելու իր խեղճ ու կրթակ հայրենիքը:

Սիրելի հայրենակիցներ, ամեն տեղ պահանջեցէք այսպիսի դպրոցներ, որ ձեր երեխաները պիտանի անդամ լինեն ձեր գերդաստանին. բարձրացնելով ընտանիքը—կբարձրացնէք ձեր հայրենիքը:

3 տարուայ մէջ կարելի է սովորել գրագիտութիւն, քիչ թէ շատ հասկացողութիւն ունենալ պատմութեան, աշխարհագրութեան մասին, ծանօթանալ Ռուսաց լեզուի

հետ. իսկ IV և V-րդ տարին անցնել գործնական գիտեցիքներ, որոնց մէջ կլինեն և այն մեծ գործօնները—ինչպէս կօօպերացիան (սպառողական ընկերութիւններ), որը շատ մեծ դեր պէտք է խաղայ ներկայ դարում: Յանկաւի է, որ կօօպերացիան լայն կերպով տարածուի մեր գիւղերում և քաղաքներում:

Ահա կտակի ցանկալի ձև, որ մեզ համար անհրաժեշտ է ինչպէս արևը, օդը և ջուրը: Այդպիսի ձևեր շատ կան, որոնց մենք կդառնանք հէնց սոյն գրքում:

IV Հ ի լ ա ն դ ա ն ո ց

Հայ մամուլը շարունակ բողոքում է, որ մեր գիւղերը դատարկւում են, որ գաւառը մարդ չէ գնում, որ մեր կարրիերիստ համալսարանականները «փափուկ» տեղեր են միայն սիրում, որ չունենք ժողովրդի համար սրտացաւ մարդիկ:

Ըստ իս՝ այդ հայեացքը մի մակերևոյթային տրամաբանութիւն է, որ չունի արմատապէս բարեփոխիչ ձգտումն:

Երբ ապրում ենք այնպիսի մի նիւթապաշտ դարում, երբ մեր շուրջը տեսնում ենք այնպիսի մարդկանց, որոնք միայն գեղեցիկ ծրագիրներ յղացողներ են, երբ դոցա խօսքերն ու գործերը չեն համապատասխանում իրար—ահա այդ վիճակի մէջ անհնարին է ժողովրդին անկեղծ ծառայութիւն մատուցանել, ժողովրդի բարօրութեան մասին խորհել:

Նախ բան դրուատելը, որ մենք չունենք պատրաստած մարդիկ, որ մեր գիտակից ոյժերը խրտնում են գաւառից, պէտք է լաւ կշռադատել թէ՛ ի՞նչ է իրականութիւնը, որի մէջ պէտք է մարդիկ գործեն, ժողովրդին ծառայեն:

Հայ ժողովրդի տնտեսական տագնապը, հայ ժողովրդի մտաւոր սընանկութիւնը ստիպում են ամեն խոհուն մարդու՝ յետադարձ մի լայն հայեացք ձգել դէպի այն վայ-

րերն ու հանգամանքները, ուր մարդիկ պէտք է գնան սերմ ցանելու:

Որպէսզի գաւառը թարմ ոյժեր գնան, որպէսզի այդ թարմ ոյժերը կարողանան սիրել գաւառական կեանքը, հարկաւոր է հող պատրաստել, յարմարութիւններ ստեղծել ու ապա դատապարտել նոցա, որոնք խորշում են գաւառական կեանքից:

Կեղծ սրտացանների, կեղծ ազգասէրների մի ստուար բանակ, անդուլ բերանով պախարակում, կոկորդիլոսի արցունք է թափում, որ գաւառները ոչնչութեան են մատնուած, որ գաւառական կեանքը ճգնաժամի մէջ է: Այդ մարդիկ թիֆլիսի թաւշեայ բազկաթոռների վրայ նստած՝ զառանցում են, որ մարդիկ չունենք, որ գաւառները գնացողներ չկան:

Շատ իրաւացի է, որ «կուշտը քաղցածին մանր է բրդում»: Ո՞ր համալսարանականը, ո՞ր դիպլոմաւորն է, որ ընկնելով գիւղէ գիւղ, քաղաքէ-քաղաք, գաւառէ-գաւառ, արիւն ու քրտինք է ցողում հայ ժողովրդի խոպանի դաշտի վերայ, հայ ժողովրդի քարացած մտքի վերայ, իր շրնորճի բազլամը դնում ընդհանուրի օգտին զօր և գիշեր, տարին 12 ամիս:

Եթէ գաւառը կենդանութեան նշոյլներ է ցոյց տալիս—այդ շնորհիւ հայ վարժապետի է, այն մարմնացեալ մտքի մշակի, որ տօթի ու ցրտի, որ քաղցի ու հալածանքի խաչն է առել ուսին, անսայթաք առաջ է տանում իր մարտիրոսագրութիւնը:

Համալսարանի հոտ առած սուբէյեկտը այնպէս է փախչում գաւառից, ինչպէս թուրքը խոզի մսից:

Ո՞վ չունի գեղագիտական ճաշակ, ո՞վ չունի հոգեկան պահանջներ, ո՞վ չէ սիրում գեղարուեստ, երաժշտութիւն, դրամա, օպերա և այլն:

Այդ հոգեկան պահանջներից կտրուելով՝ գաւառ է նետուում հայ վարժապետը, տանջուում ժողովրդի ցաւերով, հրճուում նրա ուրախութիւններով:

Փնփռ հայ վարժապետին, որ սակաւապետ է, որ գաղափարական է, որ ժողովրդի հարազատ գաւակն է: Պօսքս պատկանում է այն հայ վարժապետին, որը ըմբռնել է իր վեհ կոշուկը:

Կարբինետում առանձնացած, կեանքից կտրուած բիւրօկրատիզմի հարազատ գաւակները անվերջ ծրագրեր են մշակում, ճոճուան ֆրագներով գիւղացու ցաւերը ողբում, գաւառական կեանքի բացասական կողմերը համրում:

Գէհ, բաւական է այդպիսի բարոյախօսութիւններ կարդալը. դիմեցէք գործի, ձեր անկեղծութեանը հայ ժողովուրդը շատ քիչ է հաւատում:

Իւրաքանչիւր տեսակի հիւանդանոց բարեգործական մի հաստատութիւն է, կուլտուրական մի ձեռնարկութիւն, որտեղ ժողովրդի տկար, անօգնական անդամը հիւրընկալուում, առողջանում, ապա դուրս է գալիս կեանքի ասպարէզ՝ իր գոյութիւնը շարունակելու, ապրելու և գործելու իր և շրջապատի համար:

Աշխարհումս եղել են, կան և պիտի լինեն առողջ և տկար մարդ, առողջ ու տկար սերունդ:

Կեանքի ձախորդ բերմունքներից հիւանդանում է հայ շինականը, հայ քաղաքացին:

Որչափ մատաղ կեանքեր են թառամում դեռափթիթ հասակում, որոնց միակ յոյսը հասարակութեան սէրն է, առանց որի, այդ կեանքերը ոչնչանում են եղբայրասիրութեան աղաղակ բարձրացնելով:

Հիւանդին բուժելը, կեանքի խորշակներից ազատելը այնքան մեծ գաղափար է, որի գէմ առարկելը անհնարին է:

Ժամանակակից հասկացողութիւնը և մարդու յոյսը գէպի հիւանդանոցի օգտաւէտութիւնը, մեծ ապագայ է ներշնչում աղքատութեան ճիրաններում տառապող ազգաբնակչութեան:

Այժմեան հիւանդանոցները իրանց քանակով ու որակով չեն յազեցնում ժողովրդի ծարաւը: Հիւանդանոցներ

րի մեծ սով է տիրում քաղաքներում, գլխաւորապէս գիւղերում:

Ամեն գիւղ, ամեն քաղաք պէտք է ունենայ այնքան հիւանդանոց, որքան ազգաբնակութեան կարիքն է պահանջում, շահը հարկադրում:

Կան մարդիկ, կան համայնքներ, որոնք տասնեակ հազարներ են ծախսում եկեղեցիներ, վանքեր կառուցանելու... բայց սրչափ մեծ է այն տաճարը, երբ մի ժողովուրդ ունի հիւանդանոց, բժիշկ, մանկաբարձուհի: Սրանով նա դարմանում է իր չքաւոր հիւանդի կեանքը, երբ վերջինս ոչ միջոց ունի բժիշկ հրաւիրելու, ոչ դեղեր գրելու և ոչ էլ առողջանալու: Նա, այդ անկարեկից համագիւղացին, մեռնում է առանց մարդկային խնամքի, առանց մարդկային սիրոյ:

Մտէք մեր գիւղերը, մեր քաղաքները և դուք կտեսնէք, որ այնտեղ ապրող մարդկութիւնը քայքայւում է: Տանջւում է նա խրոնիքական մի ախտով, որին բուժելու համար կարող ձեռքեր են պէտք:

Քիչ առաջ ասացի, որ գաւառներում չկան բաւականաչափ հիւանդանոցներ, որով ժողովրդի աղքատ մասսան լայն չափով օգտուէր, զոհերի թիւը կրճատէր: Ամեն գիւղ, ամեն քաղաք, ամենից առաջ պէտք է մտածէ իր առողջութեան մասին, որի համար պէտք է ունենայ հիւանդանոց, բժիշկ և մանկաբարձուհի: Առանց դոցա՝ անկարելի է առողջութիւնը պահպանել:

Կովկասի Հայոց Բարեգործական ընկերութեան հերթական խնդիրն է—գիւղերում հետզհետէ բանալ հիւանդանոցներ, հրաւիրել բժիշկներ, մանկաբարձուհիներ:

Կը գտնուեն բժիշկներ, կը գտնուեն մանկաբարձուհիներ, որոնք եթէ ունենան գէթ ապրուստի միջոց՝ կերթան գիւղեր իրանց եղբայրներին ու քոյրերին օգնելու:

8000 բուբով կարելի է ունենալ 7 մահճակալով հիւանդանոց. իսկ բժշկի ու մանկաբարձուհու ուճիկը կարող են տալ 7—8 գիւղ հաւաքական ոյժերով: Այդ 8—10

հազար բուբով ինչքան օգուտ կարելի է տալ, սրչափ հիւանդ ու աղքատ հոգիներ կարող են փրկուել:

Այսպիսով մեր գիւղերում ինչպէս անհրաժեշտ է լուսաւորութիւն տարածելը, նոյնչափ կարեւոր է հիւանդանոցը, բժիշկը և մանկաբարձուհին: Թող մեր հարուստ հայերը իրանց կտակների կէս մասը նուիրեն հիւանդանոցներ բանալուն: Դպրոց և հիւանդանոց—սոքա երկուրեակներ են: Ահա կտակի մի այլ տեսակ ձեւ, որ պիտի իրականացնել կեանքի մէջ:

Վ Հ ա յ ու ս ու ց ի ջ ր

Հայ ուսուցիչը այն մարդն է, որ մեր կեանքի խաւար անկիւնները պէտք է լուսաւորէ, որ մեր շուրջը տիրող ապականուած մթնոլորդը պէտք է մաքրէ, որ մեր մատաղ սերնդի փափուկ սրտերում ընկերասիրական վեհ գազափարը պիտի ցանէ, որ մարդկանց սառած սրտերը պէտք է ջերմացնէ, որ մարդկանց բնած խիղճը պէտք է արթնացնէ, որ բոլորի բարօրութեան համար՝ համամարդկային մտքեր պէտք է սփռէ հասարակութեան բոլոր շերտերում:

Անհատը պարտական է օգուտ տալ այն միջավայրին, որի մէջ ինքն է ապրում: Բոլորս հասարակութեան անդամներն ենք, բոլորս պէտք է աշխատենք միահամուռ ոյժերով հասարակութեանը ծառայել: Հասարակութեան իւրաքանչիւր անդամ ունի բարոյական պարտականութիւններ: Ժողովրդին ծառայելու ամենաձանր մասը վիճակուած է հայ ուսուցչին:

Հայ ուսուցիչը իսկապէս մեծ մարդ է, որի առաջ պէտք է ամենքս խոնարհուենք: Հասարակութեան ծառայելու պաշտօններից ոչ մէկը այնքան քաղցր, այնքան բարձր չէ, որքան հայ ուսուցչի պաշտօնը, նրա կոչումը:

Հիմնովին սխալ է այն կարծիքը, թէ ամեն միջնակարգ դպրոցավարտ կարող է դառնալ ուսուցիչ: Թէպէտ

նրան տրուում է ուսուցչական իրաւունք, բայց այդ դեռ
ևս քիչ է ուսուցիչ լինելու համար: Նա պէտք է ունենայ
կոչումն դէպի ուսուցչական ասպարէզը, նա պէտք է սի-
րէ այդ պաշտօնը, բոլոր հոգով նուիրուած լինի նրան:

Այլապէս երբ մէկը ուսուցչութիւն է անում, որով-
հետև վկայագիր ունի, կամ լոկ նրա համար, որ մի կը-
տոր հաց կ'զտնէ—այդպիսի ուսուցիչը չէ կարող երբէք
արդիւնաւորել իր պաշտօնը, բարձրացնել հայ ուսուցչի
հեղինակութիւնը:

Կեանքը հայ ուսուցչական ասպարէզ է ձգում այն-
պիսի թերուս, կիսակիրթ, հայեացքներով պղտոր մարդ-
կանց, որոնք բացի վնասից՝ ոչ մի օգուտ չեն կարող տալ
ժողովրդին:

Հայ ուսուցչի պարտականութիւնները չէ սահմանա-
փակուում նրանով, որ օրեկան 4—5 ժամ դպրոցի սանե-
րին դրագիտութիւն ուսուցանէ. այլ նրանով, որ հայ ու-
սուցիչը դպրոցից դուրս պէտք է լինի և ժողովրդի ուսուցիչ:

Հայ ուսուցիչը շարունակ պէտք է ժողովրդի բոլոր
խաւերի հետ շփումն ունենայ, ուսումնասիրէ ժողովրդի
դրական ու բացասական կողմերը, անդադար յորդոր կար-
գայ, որ հասարակութիւնը զգաստանայ դէպի իւր անմի-
ջական պարտականութիւնները, որ դէպի ազգային կուլ-
տուրական հաստատութիւնները սէր տածէ, դէպի մարդ-
կութիւնը—կարեկցութիւն, դէպի համայնական գործերը—
բարեացակամութիւն:

Հայ ուսուցիչը գաւառում պէտք է քարոզչի դեր կա-
տարէ: Նա պէտք է ժողովրդին հասկացնէ այն բոլորը,
ինչ որ ժամանակը ծրագրել է նրա համար: Հայ ուսու-
ցիչը պէտք է ամեն կերպ ձգտէ, որ ժողովուրդը բարոյա-
պէս ու մտաւորապէս բարձրանայ: Հայ ուսուցիչը գիւղի
միակ վերանորոգիչը պէտք է լինի. նա պիտի վերացնէ
այն բոլոր նախապաշարմունքներն ու սնօտիապաշտու-
թիւնները, որոնք հաստ արմատ են ձգել գիւղում, հայ
շինականին գերի դարձրել:

Վերցրէք իրականութիւնը և դուք կսարսափէք: Հայ
ուսուցիչը գաւառում իրաւագուրկ է, անապահով, թշուառ:
Մի բոպէ մոռանանք այն աննօրմալ դրութիւնը, որի մէջ
հեծում են մեր դպրոցները, որոնց հետ և հայ ուսուցիչը:

Ներկայիս իւրաքանչիւր դպրոց իւր վարչութիւնով
մի-մի բռնակալ է, մի-մի սատրապ, մի-մի վանդալ, որ
կոխտուում է ամեն սրբութիւն: Չէք պատահիլ լրագրի,
շաբաթաթերթի, ամսագրի, որոնց մէջ ողբերգական նրկա-
րագրութիւններ չ'լինի մեր դպրոցների մասին, հոգաբար-
ձուների և ուսուցիչների մասին: Այդ բոլորը ապացուցա-
նում են, թէ որչափ հայ ժողովուրդը յետամնացէ, ան-
պարտաճանաչ:

Ուրախ ենք արձանագրելու, որ արդէն ժամանակ է
ուսուցիչն ու ժողովուրդը իրար հասկանան, իրար արժա-
նիքը գնահատեն:

Թէ անցեալում և թէ ներկայում դառնութեան անդ-
րանիկ բաժակը ըմպել է հայ ուսուցիչը: Նրան զրկում են
ապրուստից, նրան հարստահարում են, նրան տարուայ կէ-
սին փողոց են շարտում և նա անմոռունջ տանում է այդ
բոլորը:

Կեանքի մէջ հայ ժողովուրդը առաջին հարուածը իր
ուսուցչին է հասցնում, իր մտքի մշակին, քանի որ դեռ
պատրաստ չէ ընդունելու ճշմարտութիւնը, արդարութիւնը,
իրէալականութիւնը:

Թարմ դէպքերից երկու օրինակ, որով կարելի է գա-
ղափար կազմել հայ ժողովրդի բարոյական մաշտաբի մասին:

Հին-Ղրիմ քաղաքում 27 տարի պաշտօն է վարում
հայ ուսուցիչը: Այնտեղ նա կորցնում է առողջութիւնը և
աշխատանքի ընդունակութիւնը: 27 տարուայ հայ ուսուց-
չին Ղրիմի ապերախտ ժողովուրդը փողոց է շարտում: Այ-
նուհետև նա պանդխտում է օտար քաղաքներ, մուրաց-
կանութեան ցուպը ձեռքն առած, աղջիկ երեխաներով ծան-
քաբեռնուած: Այս դէպքը պատահել է 1907 թուին, որին
արձագանք չէ տուել ոչ հայ ուսուցչութիւնը, ոչ հայ ին-

տելիգենցիան և ոչ էլ հոգևոր իշխանութիւնը, որ անմիջական տէրն է հայոց դպրոցներին:

Հիւսիսային Կովկասի Մօզդօկ քաղաքում 1907/8 ուստարում հայոց դպրոցի հոգաբարձութիւնը տարուայ կիսին, ձմեռուայ դաժան ցրտերին երեք ուսուցիչ է փողոց շարտում: Մարդիկ հայ ուսուցիչ են արձակում յունուարի կիսից և այդ ամսուայ ոռճկից անգամ զրկում: Գիտէք, ինչ հրաշքներ է գործում հայի նախանձը, հայի ատելութիւնը...: Այդ տարի Մօզդօկի հայոց դպրոցի հոգաբարձութիւնը 1100 ուրլի ուսուցիչների ոռճիկը իւրացրեց, ետևներից էլ ժեշտ, լապատկա... բղաւեց: Արձակուած ուսուցիչների մեղքը այն է եղել, որ կամեցել են դպրոցը ազատել Ղ. Տէր-Գրիգորեանի պէս աւագ ուսուցչի ձիւղից:

Այսպիսի դէպքեր, եթէ փնտռէք, շատ կգտնէք հայկական տխուր իրականութեան մէջ:

Ասացէք, խնդրեմ, ինչ վարմունք է դա դէպի հայ ուսուցիչը: Վայրենի զլուսներն ու բուշմէնները հազիւ թէ իրանց ուսուցչին այդպիսի պատուի արժանացնեն... Իսկ մեր Ֆրակաւոր հոգաբարձուները ?:

Մենք տեսանք, որ հայ ուսուցչի միսսիան շատ մեծ է, իսկ նրա կրած զրկանքները սոսկալի:

Պէտք է ձգտել, պէտք է աշխատել, որ այսուհետև հայ ուսուցիչը ունենայ ապագայ, կեանքի ապահովութիւն:

Կովկասի հայոց ուսուցչական պրօֆէսիօնալ ընկերութիւնը գեղեցիկ վիճակ կստեղծէ հայ ուսուցչի համար — եթէ ունենայ դրամական միջոցներ:

Ինչքան օգուտ, ինչքան չքնաղ մի ձեռնարկութիւն կլինէր, թէ որ կուրօրտներից մէկում, հայ ուսուցիչների համար սանատորիա հիմնուէր: Ազգի մշակները ամբողջ արձակուրդներին կարող էին այդտեղ կազմուրուել, կորցրած ոյժերը վերանորոգել: Սանատորիան կարելի է ունենալ Ուրալէլում, Բորժօմում, Աբասթուանում, կամ Կովկասի հանքային ջրերում:

12—15 հազար ուրլով կարելի է համեստ սանատո-

րիա ունենալ, որի բարոյական օգուտներից մէկն էլ այն կլինի, որ ուսուցիչները իրար հանդիպելով, մտքերի շրփումն կունենան, երիտասարդութիւնը կը կապեն իրանց հետ, դասախօսութիւններ կը կարդան, երեկոյթներ կը սարքեն, ներկայացումներ կը տան:

Բացի սանատորիա ունենալուց, անհրաժեշտ է հայ ուսուցիչների համար կազմել դրամարկդ, ծերացած աշխատանքի անընդունակ ուսուցիչներին թողակ տալու:

Ահա կտակի գեղեցիկ ձևեր, որոնց պէտք է հետևեն մեր հարուստ ազգայինները:

Հայ ուսուցիչը մեծ մարդ կլինի՝ եթէ կարողանանք նրան ապահովել թէ նիւթապէս և թէ բարոյապէս:

Հայ ուսուցչի մեծութիւնը չափուում է նրա հետևեալ բարեմասնութիւններով. —

1. Նա պէտք է լինի բազմակողմանի զարգացած մարդ:
2. Նա պէտք է գիտնայ առողջապահութեան գլխաւոր հիմունքները և մինչև բժշկի հասնելու օգնութիւնը:
3. Նա պէտք է գիտնայ հոգեբանութեան հիմունքները:
4. Նա պէտք է լինի անկուսակցական — առաջադիմական:
5. Նա պէտք է խոստանայ կօօպերացիայի հիմունքները գործնականապէս տարածել թէ գիւղերում և թէ քաղաքներում:

VI Գիրք եւ գրադարան

Սելացի մարդու մէկն ասում է. — Աշխարհի բոլոր փառքերն ու պատիւները չէի փոխիլ մի լաւ գրքի հետ: Ո՛չ մի թագաւորութիւն, ո՛չ մի իշխանութիւն, ոչ արքայական ապարանքները չեն կարող իրանց խաբուսիկ երևոյթներով ինձ շլացնել, չեն կարող իմ աչքում արժէք ունենալ, բարձր երևալ՝ քան մի գիրք — որը մարդուս հմայում, տանում է մի այլ աշխարհ, մի այլ կեանք — ուր ամեն ինչ խաղաղ է, բարի, կատարեալ անդորրութիւն: Նրան

առաջարկել են թագաւորութիւն, բայց ասացին, որ զըրբեր պէտք է չունենաս.— Նա մերժեց:

Մտաւոր աշխատանքը, մտաւոր առանձնութիւնը իսկապէս երջանկացնում է մարդուս:

Մարդս տարուած զըրբի վսեմ գաղափարներով՝ ըսպէս ապէս կտրուում է, անշատուում աշխարհի հոգսերից, պատրանքներից, մարդկային արատներից:

Նա սլանում է դէպի վեր՝ եթերական մի բարձրութիւն, որի գաղաթին բազմած է յաւիտենականութեան մուսան. նա ոյժ է տալիս մարդկային զգացմունքներին, ոգևորում, յոյս ներշնչում մարդուն դէպի բարին, վսեմն ու գաղափարականը:

Մարդուս զարգացման համար արտադպրոցական կըրթութիւնը ամենամեծ գործօնն է: Ո՛չ մի դիմազիա, ոչ մի համալսարան չեն կարող փոխարինել արտադպրոցական կըրթութեան: Եւ ճշմարիտ: Խելացի ընթերցանութիւնը, սիստեմատիքաբար զըրբեր կարդալը, ահագին զարկ է տալիս մարդուս առաջադիմութեան, նրա մտաւոր պատրաստութեան:

Բազմաթիւ օրինակները ցոյց են տալիս, որ կեանքի մէջ արտադպրոցական կըրթութեամբ պարապողները, մեծամեծ նուաճումներ են գործում գիտնական ու քաղաքական աշխարհում:

Դիպլոմը չէ երաշխաւորում, որ ունեցողը բարեկիրթ է, պատրաստուած, բազմակողմանի զարգացած մարդ: Դիպլոմը միայն հաստատում է, որ կիրակոսը միջնակարգ կամ բարձր դպրոցաւարտ է:

Մինչդեռ արտադպրոցական կըրթութիւնը երաշխաւորում է, որ անհատը ընթերցանութեամբ, զըրբեր կարդալով մեծ պաշար է ձեռք բերել:

Արտադպրոցական ուսմունքը բացի կըրթիչ նշանակութիւն ունենալուց, ունի և հոգեկան կըրթութիւն: Նա մարդուս հոգին կըրթում, ազնուացնում է:

Անհրաժեշտ է զըրբերի յայտնի ընտրութիւնը, ինչ-

պէս Խարկովի ուսուցչուհիների կազմած ձեռնարկը «ինչ կարդալ»: որ մի գեղեցիկ ուղեցոյց է ընթերցող դասի համար:

Երբէք ուշ չէ սովորելը: Մարդս իր ամբողջ կեանքում պէտք է սովորէ, պէտք է կարդայ անվերջ ու անվերջ: Նայեցէք ժողովրդական համալսարաններին, որոնք ահագին զարկ են տալիս մարդկային յառաջադիմութեան:

Հայ գրականութիւնը չունի ամեն հասակի և ամեն պատրաստութեան համար մատչելի զըրբեր, զբացուցակ: Այս դէպքում մեծ ծառայութիւն են մատուցանում մատաղ սերնդին «Հասկերը» և «Պատանեկական գրագարանը»: Այդ հրաշալի զըրբերը ընթերցողին հարկադրում են սիրել բնութիւնը, որի մէջ ամեն ինչ թագնուած է: Խօսքըս վերաբերում է «Պատանեկական գրագարանին»:

Իւրաքանչիւր դպրոց եթէ տարեկան մի փոքրիկ գումար նուիրէ, այն ժամանակ մենք զիւղերում կունենանք ընթերցանութեան յարմար զըրբեր, լաւ գրագարաններ:

Գիրքը չէ կարող ինքը իրան տարածուել. պէտք է նրան տարածել, ընդհանրացնել: Այդ կարող են անել մարդիկ երկաթուղու կիսակներում, երկաթուղու կայարաններում, փոստատան և եկեղեցու բակերում—փոքրիկ գրավաճառանոցներ բանալով՝ նման ուսու աֆէսիների, որոնք զըրբերը շալակած գիւղէ-գիւղ են ընկնում, երկաթուղիների գնացքներում ու ամեն տեղ զըրբեր վաճառում:

Դժբաղդաբար, վերջիններս զըրբի մէջ խտրութիւն չգնելով՝ մասամբ փլտսում են ժողովրդի յառաջադիմութեան, քանի որ այդ զըրբերի մէջ լինում են անյարմարները:

Հայ ուսուցչական պրօֆէսիօնալ ընկերութիւնը արտէլի միջոցով կարող էր ընթերցանութեան զըրբեր կազմել, տարածել դոցա ժողովրդի լայն խաւերում՝ երբ ունենար նիւթական միջոց: Նա կարող էր զըրբեր տարածելու ս. գործը լիովին ստանձնել՝ երբ ունենար ժողովրդի կողմից նիւթական աջակցութիւն: Ահա կտակի և

մի այլ եղանակ, որ կարելի է միայն փողով իրագործել: Հասարակական հիմնարկութիւնները առանց նիւթականի ոչինչ անել չեն կարող: Ժողովուրդը իրաւունք չունի նըրանցից պահանջել այն՝ ինչ որ ինքը չէ տուել:

Անմիտ քելէխների փոխարէն կարելի է 100 րուբլիով մի գիւղական գրադարան բանալ: Երբ գիւղում եղբայրը եղբօրն է սպանում, հայրը որդուն, քոյրը եղբօրը, այսպիսի ցաւալի տգիտութեան մէջ է խարխափում գիւղական ժողովուրդը, որքան օգուտ կարող են տալ բարոյախօսական-գիտական գրքերի տարածումը:

VII Թ ա ս ր ո ն ն

Թատրոնը դպրոցի կրտսեր եղբայրն է: Նա կեանքի դպրոցն է, որտեղ մարդիկ պէտք է տեսնեն իրանց իսկական դէմքերը:

Թատրոնը ոչ միայն չէ բթացնում հասարակութեան ճաշակը, կաշկանդում նրա զգացմունքները, արգելք լինում առաջադիմութեան, ընդհակառակը, նա ներկայացնում է կեանքը իր դրական ու բացասական կողմերով:

Թատրոնը դնում է հասարակութեան առաջ բարու և չարի, գեղեցիկի և տգէղի հարազատ տիպեր ու նկարագրութիւններ:

Հիմնովին սխալ է այն կարծիքը, թէ թատրոնը փրկացնում է ժողովրդի բարբը, այլասեռում ժողովրդին, ետ մղում նրան դէպի գայթակղութիւն:

Այդ ռամիկ հայեացքը վաղուց է շրւած գեղարուեստական աշխարհում:

Ինչպէս օպերան իր երբեմնակի մելամաղձօտ, լալկան ակօրգներով պատկերացնում է անհատի և մասսայի աղեկտուր վիշտն ու մորմօքը, իւր գեղեցիկ մեղեդիներով լարում լսողի երևակայութիւնը, նրբացնում նրա հոգին ու զգացմունքները, և երբեմն էլ խրոխտ ելևէջներով զննում լսողին դէպի վրէժ, դէպի կռուի դաշտ—նոյնպիսի

գեր է խաղում և դրաման իր գողտրիկ արտայայտութիւններով:

Օպերան և դրաման կեանքի դիսօնանսներն են արտացօլում, ժողովրդի առաջ դնում լաւի ու վատի ընտրութիւնը:

Թատրոնն ունի և մի այլ օգտակար կողմ: Մայրենի լեզուով տուած ներկայացումները հասարակութեանը ուսուցանում են իւր լեզուն, նրա նրբութիւնները ու հարստութիւնները՝ վառ պահում ժողովրդի գիտակցութեան մէջ մայրենի լեզուի անհրաժեշտութիւնը:

Թատրոնը, մայրենի լեզուով ներկայացումները անհրաժեշտ են հայ ժողովրդին ոչ միայն կենդրոններում, նաև գաւառական քաղաքներում ու գիւղերում: Տասը լեզու սովորիր, տասը լեզուով խօսիր՝ բայց քո մայրենի լեզուն մի մոռանար, հայ ժողովուրդ:

Ով իր սեփականութիւնը մոռանում է, ով իր սեփականութիւնը չէ գնահատում, նա չէ կարող և ուրիշի սեփականութիւնը սիրել ու յարգել: Մայրենի լեզու գիտնալը բնութեան օրէնք է, որի դէմ ոչ ոք իրաւունք չունի մեղանչելու:

Տասը լեզու սովորիր, տասը լեզուով խօսիր՝ բայց քո լեզուն մի մոռանար, հայ ժողովուրդ, որի մէջ է քո միակ երջանկութիւնը: Ով իր լեզուն չ'գիտէ, ով իր լեզուն չի սովորում՝ նա արդէն բնութեան օրէնքը ժխտում է, որի դէմ ոչ ոք իրաւունք չունի մեղանչելու:

Իւրաքանչիւր հիմնարկութիւն, երբ չի ծառայում իր բուն նպատակին, արդէն կորցնում է ժողովրդի աչքում իր յարգը:

Թատրոնի կարևորութիւնը հայ ժողովրդի համար անուրանալի լինելով, այժմ կարևոր է խորհել թէ՛ ի՞նչպէս անենք, որ այդ ս. գործը լայն կերպով տարածուի գաւառում, իր իսկական նպատակին ծառայէ:

Գաւառում հայ ժողովուրդը ոչ միայն չունի թատրոն, դերասանական խմբեր, ձոխ ըէպէրտուար, թատրո-

նական լաւ գրուածքներ ու թարգմանութիւններ, այլ և այդ բոլորի մասին չի էլ մտածում:

Հայկական իրականութեան մէջ ամեն բան «եօլա» տանելով է առաջ գնում: Հայ դերասանները չունեն յատուկ դերասանական դպրոց. նոքա մեծ մասամբ թերուս մարդիկ են, որոնք միայն դանդաղեցնում են գեղարուեստի մուտքը:

Ամեն թերուս, ամեն գրի սև ու սպիտակը ճանաչող բարձրանում է հայ բեմ, աղաւաղում պիէսները, պղտորում ժողովրդի ճաշակը:

Ռուսահայի թատրոնը կատարեց իւր 50-ամեայ յօբէլեանը. 50 տարուայ մէջ նա ցանկալի հետեանքներ շատ քիչ է տուել: Մինչև օրս չկայ մի դպրոց, որտեղ դերասանական ձիրք ունեցող մարդիկ մտնէին, ուսումնասիրէին թատրոնական գործը իւր բոլոր ճիւղերով և որպէս պատրաստուած դերասաններ այն ժամանակ միայն հրապարակ նետուէին հայկական հորիզոնում:

Այդպիսի մի դպրոցի կարիք է զգացւում ոչ միայն Թիֆլիսում, այլ և Երևանում ու Բագուում:

Մենք կողմնակից ենք այն կարծիքին, որ փոխանակ մի գեղարուեստական թատրոն ունենալու Թիֆլիսում, նրա շէնքով շլանալու, աւելի գործնական կլինէր, երբ ամենից առաջ ունենայինք 1—3 հատ դերասանական դպրոցներ, ունենայինք դերասանական լաւ ոյժեր, ստեղծէինք դրանց համար ֆօնդ՝ ապա միայն միջոց եղած ժամանակը կառուցանէինք հայկական Պանթէլեօն, գեղարուեստական, ճարտարապետական մի հոյակապ տաճար:

Այժմ այդպիսի թատրոնը չէ կարող հայ ժողովրդին պարծեցնել օտարի աչքում, իր հարևանի մօտ՝ երբ նա չունի ոչ պատշաճ դպրոց, ոչ դերասանական խումբ, ոչ կազմակերպութիւն, և որ գլխաւորն է, դերասանների ապահովութեան դրամարկդ, օրինաւոր րէպերտուար:

Ահա կտակի և մի այլ ձև, որ հայ բարբերարները չըպէտք է մոռանան: 1) նախ՝ պէտք է այնպիսի կտակներ

կազմել, որոնցով կարելի լինէր Անդրկովկասի 3 հայաշատ շրջաններում թատրոնական դպրոց բանալ: 2) Պէտք է այնպիսի կտակներ անել, որոնցով հայ դերասանների վիճակը ապահովուէր և 3) պէտք է այնպիսի կտակներ անել, որով կարելի լինէր Թիֆլիսում մի հոյակապ թատրոն ունենալ, բայց ոչ հարիւր հազարանոց: Փոքրից սկըսել ու հետզհետէ մեծացնել: Անմիտ թռիչքները գործնական արդիւնք չեն տալիս, որովհետև գաւառները զուրկ են որևէ մի կուլտուրական հաստատութիւնից: Զմոռանանք, որ թատրոնը նոյն ուսումնարանն է: 15—20 հազար ըուբլիով մենք լաւ թատրոններ կարող ենք ունենալ մեր գաւառներում: Պէտք է աշխատել, որ գոնէ կտակի միջոցով իրականացնել այս խնդիրը:

VIII Հայի գաղթականութիւնը

Որևէ մարդու, որևէ մի ժողովրդի հայրենիքից գաղթելու ամենագլխաւոր պատճառը—նրա տնտեսական աննախանձելի կացութիւնն է, որը ամենագլխաւոր գործօններից մէկն է:

Երբ մարդս ապրելու միջոց ունի, երբ հայրենիքում աշխատանք կայ՝ նա երբէք պանդխտութեան ցուպը ձեռք չէ առնում, նա չէ կտրուում այն հողից, որտեղ նա ծնել է, սնուել ու մեծացել: Նա չէ բաժանւում այն քաղցր օդից ու ջրից, որից իր նախնիքն է յագեցրել ծարաւը:

Հայրենիքի սէրը, հայրենիքի կարօտը մարդու կէսը մաշում, քայքայում է պանդխտի առողջութիւնը: Մի՞թէ կապիտալը կարող է հասկանալ, որ մեծ գիւղերում, փոքրիկ քաղաքներում անհրաժեշտ են գործարաններ:

Այո, պանդխտութեան է դիմում հայը գիւղից-քաղաք, քաղաքից-քաղաք. հազարաւոր վերստեր կտրում բաղդ որոնելու, ապրուստ գտնելու:

Գոյութեան կոխը խոր ակօսներ է դրոշմել հայ ժողովրդի ճակատին: Դարերի չարագուշակ աւերածութիւն-

ներին չկարողանալով դիմադրել—հայ ժողովուրդը պանդխտում է ամեն տարի, ամեն օր, ամեն բուստ: Նա խելակորոյս ոգևորութեամբ առաջ է տանում իր այդ աղէտաբեր քայլը. իսկ թէ ո՞ր է հասնելու—այդ մասին նա շատ թեթեւ է մտածում:

Գաղթականութիւնը սեփականութիւն է այնպիսի մի ազգի, որը անտեսական բոլոր միջոցներից զուրկ է, որը հողատիրական գլխաւոր իրաւունքից զուրկ է: »

Թողնենք հայի անցեալը, կանգ առնենք ներկայի վերայ, խորհրդակցենք ներկայի և ապագայի մասին:

Չենք խօսում Տաճկահայի գաղթականութեան մասին, որի շարժառիթները պարզ է ամեն մի բանիմաց հայի համար:

Ո՞վ չգիտէ թուրքական հալածանքը, ո՞վ չգիտէ Սուլթանական արիւնուռչտ ծրագիրը—Հայաստանը առանց հայերի դեպիզը—որը Աբդուլ Համիդների ուղեղն է մաշել, նրանց ջղերը քայքայել, հերթական խնդիր դարձել:

Տարօրինակ ապուշութեամբ են շնչում սուլթանական պալատի քաղաքագէտները: Ապրել XX-րդ դարում, հալածել ազգաբնակչութեան կաթնատու կովին (հային), սրի քաշել Սուլթանի խոպան գաշտերը մշակողներին—այդ արդէն մի այնպիսի խելագարութիւն է, որ ոչ մի բժիշկ չէ կարող բուժել:

XX-րդ դարում Թիւրքիայի ներկայ քաղաքականութիւնը ամբաստանաբար անցեալի վերայ մի այնպիսի տագնապի է դիմում, որ ցաւալի է նկարագրել: Պետութիւնները ձգտում են իրանց հպատակներին լայն իրաւունքներ տալ, խօսքի, մտքի ու խղճի ազատութիւն տալ, կեանքի ու ստացուածքի անձեռնմխելիութիւն տալ, այն ինչ օսմանեան ակարամիտ վեհապետները երկիր են քանդում, հպատակներին հալածում, իրանց տէրութեան համար կենդանի գերեզման փորում:

Իւրաքանչիւր պետութիւն իւր ազգաբնակչութիւնով մի գերզանտուն է, մի համայնք է: Այլ կերպ հասկանալը սխալ է:

Տան մեծը հոգատար հայր է տան միւս անդամների համար: Երբ հայրը հաւասար աչքով չէ նայում իր զաւակների վրայ, խտրութիւն ու ջոկողութիւն է դնում նոցա մէջ, այն ժամանակ կորցնում է նա իր հայրական հմայքը, փառքն ու պատիւը: Այնուհետեւ տան մէջ պառակտումն անխուսափելի է: Պառակտումից առաջանում է ոյժերի վատնումն, տան կործանումն:

Իւրաքանչիւր պետութեան, իւրաքանչիւր ազգի նըշանաբանը այս պէտք է լինի. «Մէկը՝ ամենքի—ամենքը՝ մէկի համար»:

Միութիւնը, համերաշխ կեանքը աշխարհի առաջին դէնքն է, որով պէտք է զրահաւորուեն թէ պետութիւնները և թէ ազգերը:

Դառնանք այժմ Ռուսաստանի հայերին. տեսնենք նա ևս նոյն դրութեան մէջ է, թէ ոչ:

Ռուսաստանի հայութիւնը կացութեամբ նոյնը չէ, ինչ որ Տաճկաստանի հայութիւնը: Դժբաղդաբար գաղթը կրկնում է, անվերջ շարունակում: Կովկասի հայկական զիւղերը դատարկուել են. գիւղերում այլ ևս չեն մնացել թարմ ոյժեր, կան միայն ծերերը, գործի անընդունակ մարդիկ:

Կապիտալը այնտեղ է ամբարուած՝ որտեղ կան գործող ձեռքեր, որտեղ կայ երկրի արդիւնաբերական առատ աղբիւր:

Բագուն իր ծոցն է առել հայ գիւղացուն, ստրկացրել հայ շինականին: Հայ գիւղացիները ահագին քանակութեամբ դիմում են այդ «խոտոտացեալ աշխարհը», այնինչ այնտեղ ոչ թէ «մանանայ» գտնում, այլ թոյն, ժանգ, որ կրծում է նոցա սիրտը, ապականում հոգին, այլանդակում մարդկութիւնը:

Կապիտալը բարքերի փշացման առաջի գրաւականն է այն ժողովրդի համար, որ չունի զրա դէմ մրցելու ընկերութիւններ, կուլտուրական հաստատութիւններ:

Բագուն, որ վաղուց է ժառանգել «Անիծեալ վայր»

տիտղոսը, մի այնպիսի քաղաք է, որի մէջ ընկնողը խորասուզուում է այլասեռման գիրկը: Այդ քաղաքի մթնոլորդը թունաւորուած է: Նա հալածում—մաշում է հայ գիւղացուն, հայ բանուորին, հայ արհեստաւորին—մինչև ծուծը քամում նրա առողջութիւնը, կիսակենդան վերադարձնում դէպի հայրենիք, վարակում գիւղացիներին:

Նուազ չէ փաստը և Վօլգայի ամբողջ հոսանքին մատնուած հայ գաղթականութեան, միջին Ռուսաստանի հայ գաղթականութեան:

Մեր մանկավարժների մեծ մասը հայոց ազգի փրկուածութիւնը գտնում են նրա տարրական դպրոցների քանակութեան մէջ: Այդ մանկավարժները թերևս Գերմանիա, Շվէյցարիա մնալով, Եւրոպայի լուսաւորութիւնը ուսումնասիրելով՝ հրապարակ են դուրս գալիս հայոց ազգի բաղդը տնօրինելու և բարձրացնելու հայութիւնը կուլտուրայէս:

Չոր ու ցամաք տարրական դպրոցները, որտեղ միայն կարելի է գրագիտութիւն ուսուցանել—չէր կարող Շվէյցարացուն, Գերմանացուն այնքան բարձրացնել, նրա տնտեսական վիճակը բարելաւել:

Տարրական դպրոցների հետ զուգընթացաբար առաջ են տարւում և գիւղատնտեսական—տեխնիքական դպրոցները, որովհետև այդ երկիրներում մէկն առանց միւսի ոչինչ է, ապարդիւն է:

Այսպիսով հայ ազգի փրկութիւնը կախուած է ոչ թէ լոկ տարրական դպրոցների քանակութիւնից, այլ նրա որակից—գիւղատնտեսական, տեխնիքական ճիւղեր ունենալուց:

Եթէ մեր գիւղերում, մեր քաղաքներում գիւղատնտեսութիւնն ու տեխնիքան տարածուած լինէր, եթէ հայ շինականին սովորեցրած լինէին այդ անհրաժեշտ գիտելիքները՝ այն ժամանակ այսքան աղքատութիւն, այսքան սով, այսքան տառապանքներ չէին լինիլ:

Գիւղացին երբ հողի պակասութիւն է զգում, այն ժամանակ է նա գաղթում քաղաք մի կտոր հաց ձարելու:

Բայց երբ նա գիտենայ արհեստ, նա տանը կնստէ, գործ կշարունակէ: Երբ որ հայ գիւղացին գիտենայ հողը մեքենաներով մշակելը, ամեն մի թիզ հողից առատ արգիւնք ստանալու եղանակը, նա երբէք չի դիմիլ դէպի քաղաք, նա երբէք հայրենիքից չի բաժանուիլ:

Ամենից առաջ անհրաժեշտ է գիւղացու տնտեսական վիճակը բարելաւել, որից յետոյ լուսաւորութիւնը ինքն ըստ ինքեան կտարածուի, քանի որ ամեն օգտակար ձեռնարկութիւն իրագործուում և յարատեւում է այն ժամանակ, երբ նա տնտեսապէս—նիւթապէս ամուր ճիւղերի վրայ է դրուած:

Մինչև հայ գիւղացին չը սովորէ հողի նորագոյն մըշակութիւնը, չը ըմբռնէ արհեստի օգտակարութիւնը, մինչև այդ ժողովուրդը չը համոզուի, որ հողից թանգագին բան չը կայ աշխարհումս, նա՛՛ այդ գիւղացին միշտ էլ մտամոլոր թափառականի պէս կը դեգերէ օտար քաղաքներ, կը մատնուի պանդխտութեան գիրկը, կը հիւժուի կը թոշնամի, կը ոչնչանայ:

Իւրաքանչիւր ժողովրդի մէջ գաղթականութեան շարժառիթը ոչ թէ լուսաւորութիւնից է առաջանում, այլ նրա տնտեսական տագնապից:

Եթէ ընդունում ենք, որ ամեն մի գաղթականութիւն փաստակար է ժողովրդի համար, ուրեմն պէտք է դորա առաջն առնել այն պատճառների վերացումով, որից առաջանում է գաղթականութիւնը:

Հայ ժողովրդի գաղթը կը վերջանայ միայն այն ժամանակ, երբ նա ամուր կերպով կապուած կը լինի հողի հետ, հայրենիքի հետ, արհեստի հետ: Ուրեմն, այսուհետև մեզ հարկաւոր է ունենալ արհեստագիտական-տեխնիքական դպրոցներ մեծ քանակութեամբ:

Պէտք է լինել հետևողական. երբէք չ'պէտք է փաստերը յեղաշրջել: Նորից կրկնում ենք և հազար անգամ էլ պէտք է կրկնենք, որ կեանքի մօտից չպէտք է անցնել

առանց օգտուելու: Ժամանակի պահանջն է ամեն կերպ բարձրացնել ժողովրդի տնտեսապահութիւնը:

Մեր կարծիքով նոր բացուելիք դպրոցները թող քանակութիւնով քիչ լինեն, թող երեխայքը սովորեն 2—3 տարի գրել-կարդալ, իսկ չորրորդ և հինգերորդ տարին թող անցնեն գիւղատնտեսական ուսմունքը իւր ամենալայն ճիւղերով, իբրև տարրական դպրոցների շարունակութիւն:

Ասացէք, խնդրեմ,— աշակերտը 2—3 տարի ուսանում է կարգալ-գրել. միթէ նա կարող է առաջ գնալ՝ եթէ մեզ մօտ բոլորովին բացակայում է արտագոյրոցական լայն կրթութիւնը: Չը կայ լրագիր, թատրոն, գրադարան, գիւղական կլուբներ... և այլն:

Գիւղատնտես վարժապետը ոչ միայն կլինի մանուկներին ուսուցանող, այլ նա կլինի ուսուցիչ և պիտանի անգամ ամբողջ գիւղացիութեան:

Ամենափոքրիկ գիւղում անգամ կարելի է այդ գաղափարը իրագործել. երեխայքը երրորդ տարին պիտի սովորեն գիւղատնտեսական գիտելիքները:

Իերենք մի օրինակ: Մի գիւղում երկու դասարանից բաղկացած ուսումնարան կայ: Երրորդ տարին վարժապետը սովորեցնում է նախ՝ ինչպէս պատրաստել իւղը: Նա այդ մասին կարգում է և գործով էլ ցոյց տալիս իւղ պատրաստելու ձևը՝ գիտութեան վերջին խօսքի վերայ հիմնուած:

Այնուհետև կանչում է գիւղացոց ու մի քանի զրոյցներով հասկացնում կօօպերացիայի վեհ գաղափարները, որից յետոյ առաջարկում հետևեալ առաւօտ բերել իրանց կովերի կաթը և սեպարատօրի միջոցով սովորեցնում է ստանալ թարմ իւղ: Պատրաստած իւղը ուղարկում է քաղաք, հանած կաթը վերագործնում տէրերին. իսկ իւղը ծախելուց յետոյ՝ ամեն շաբաթ մաս ունեցողները ստանում են նաղդ փող ու առաջուց էլ որոշում մի որոշ տոկոս (10⁰/₀, 15⁰/₀) թողնել ուսումնարանի օգտին (դպրոցական ֆօնդ):

Մարդիկ, որոնք չէին մտածում, որ իրենց կուպէկներով կարող են բարեգործութիւն անել, նրանք էլ ուսումնարանական ֆօնդին մասնակցում են. ամիսներ-տարիներ անցնելուց յետոյ՝ այդ ֆօնդի մի մասը կերթայ կրկին անգամ դպրոցը ձոխացնելու և ուրիշ կուլտուրական գործերի համար:

Հարկաւ, այսպիսի գործերը պէտք է կատարուեն խիստ վերահսկողութեան տակ, ընտրովի մարդկանցից բաղկացած մի յանձնաժողովի ձեռքով: Այդ գործին կմասնակցեն ինքնաձանաչութիւն ունեցող թէ կին և թէ մարդ, որով կիրագործուի այն վեհ գաղափարը. «Մէկը բոլորի, բոլորը մէկի համար»: Կարող էինք օրինակ բերել և փոքր վարկի ընկերութիւնների մասին, բայց թողնենք:

Մենք աղքատ ժողովուրդ ենք, մեզ բոլորովին ձեռնտու է հասարակ տարրական ուսումնարաններ ունենալ. պէտք է սրանց շարունակութիւնը գոնէ 2 տարով լինեն գիւղատնտեսութեան գիտութիւնների բաժին, յարմարացնելով տեղական պահանջներին:

Թո՛ղ Ղզլարում բացուի գինեգործութեան և գինեգիտական բաժանմունք, Ախալցխայում-պարտիզպանութեան շերամապահութեան և այլն և այլն:

Ոչ ոք հակառակ չէ տարրական դպրոցների դէմ, եթէ միայն դրանով կարելի լինէր գիւղը տնտեսապէս բարձրացնել:

Թո՛ղ ներուի ասել, որ գոնէ մեր ժամանակում, երբ մենք բոլորովին քայքայուած ենք—դպրոցները պէտք է հետևեն գործնական նպատակի:

Ահա այսպէս զինուած գիւղացին՝ շատ հազիւ կ'թողնէ իր հայրենի սրբավայրը ու չի դիմիլ օտար տեղեր: Փոքր էլ խօսենք մեր ցրուած գաղութների մասին:

IX Հայկական Գաղութներ

Չենք դիմիլ պատմութեան, որը մեզ երկար կտանէր:

Հայկական գաղութների մասին կան առանձին գրուածքներ, որտեղ բացատրուած է այդ գաղութների բացասական կողմերը:

Հայրենիքից կտրուած, կոպէկներով հարստութիւն են դիզում հայկական գաղութներում: Բուն երկրից հեռացած հայկական գաղութները հայ ժողովրդի խորթ զաւակներն են, հայրենիքի խորթ սերունդը: Տարիներով նստում, հարստութիւն են ձեռք բերում. նոյնիսկ մատներով կարելի է հաշուել Ռուսաստանի հարուստ հայերին. նոքա համեմատած Ռուսաստանի և արտասահմանի ժողովրդի հետ, շատ չնչին տեղ են բռնում կարողութեան տեսակէտից: Բայց, այնուամենայնիւ պարտական են իրանց հայրենիքն ու սրբավայրերը չ'մոռանալու:

Գաղութներում նոյնն է նկատուում. միջակ դասակարգը բոլորովին հեռու է կուլտուրական կեանքից. չկան կուլտուրական այնպիսի ձեռնարկութիւններ, որոնք տընտեսապէս բարձրացնէին միջակ ու աղքատ դասակարգին: Միջակ ու աղքատ դասակարգը նոյն վշտի, նոյն տառապանքի մէջ է, ինչ որ բուն հայրենիքում—կովկասում:

Հայկական գաղութների մասին այսքանը կարելի է դրական կերպով ասել, որ վերջիններս այլասեռման փափուկ հողի վրայ են կանգնած: Նոցա միտքը չէ բանում ընդհանուր հայութեան գործերով, և որ զլխաւորն է, նոքա աստիճանաբար կորցնում են իրանց մայրենի լեզուն, իսկ գրականութեան և պատմութեան մասին—խօսք լինել չէ կարող: Մայրենի լեզուն, հայկական սովորութիւնները վաղուց են չքացած հայ գաղութներում: Օտարամոլութիւնը, նորամուծութիւնները գաղութների հայերին անզգալի կերպով կտրում են հայութիւնից:

Վերցրէք ամբողջ Բեսարաբիան, վերցրէք Պերսոնի նահանգը, վերցրէք Դոնի, Վօլգայի և Թերէքի հայ գաղութները, վերցրէք նոյնիսկ ամենահայաշատը—Ղրիմի թերակղզին և դուք կը տեսնէք, որ այդտեղի հայութիւնը խոր թմրութեան մէջ է: Նա չէ շնչում հայութեան կրթ-

քով, նա չէ զգացում հայութեան տխուր և ուրախ բույններով:

Այդ գաղութների 95%—ը հայերէն չը գիտէ. նա չէ ստանում հայ լրագիր, չէ կարգում հայերէն գրքեր, չէ հետաքրքրում իւր լեզուով, իւր գրականութիւնով: Իսկ եթէ մի ժողովուրդ կորցնում է իր լեզուն ու գրականութիւնը, արդէն դորանով սև խաչ է դնում իր ազգութեան վերայ:

Ըստ երևոյթին Ռուսաստանի հայ գաղութներն աւելի նիւթական ապահովութիւն ունեն՝ քան կովկասի հայերը: Նոքա կարող են շատ գործ անել, մեծ օգուտներ հասցնել թէ իրանց միջի կուլտուրական հաստատութիւններին և թէ բուն հայրենիքին:

Իսկ ինչ ենք տեսնում: Հայրենիքի այդ խորթ զաւակները կղզիացած կեանք են վարում. սէր դէպի հայրենիքը, սէր դէպի ազգային կուլտուրական հիմնարկութիւնները—մոռացուած է դոցա մէջ:

Գաղութի հարուստ հայերը իրանց կարողութիւնները փչացնում են արտասահմանեան կեանքում: Տարեկան 2—3 անգամ այցելում Եւրոպայի մայրաքաղաքները, ուսանում Ֆրանսիական լեզուն, դայեակներ վարձում օտար ազգերից ու անում այն բոլորը, ինչ որ դոցա ընդհանուր կապը խզում է հայութիւնից:

Այսպիսի դրութիւնից կարելի է եզրակացնել, որ մեր գաղութների հայերը աստիճանաբար լուծւում, կորչում են մեծ հոսանքի մէջ:

Եւ այդ շատ բնական է, իսկ պատճառն էլ պատմական է:

Ի՞նչ ենք տուել, որ ինչ պահանջներ: Օտարուհիների վրայ ամուսնանալը մի խրոնիքական ախտ է մեր գաղութների հայերի համար, որից նոքա չեն կարողանում ազատուել: Նոյն իսկ տաճկահայ գաղթականները ևս այդ մոլութեան են մատնուած: Մենք զիտենք հազարաւոր օրինակներ, որոնց մասին ամաչում ենք նոյնիսկ գրել:

Արդ՝ ինչ անել հայ գաղութների հետ: Չե՞նք վերցնել, ակնկալութիւն չունենալ — ո՛չ, և իրաւունք էլ չունենք:

Անհրաժեշտ է ուշադրութիւն դարձնել հայկական գաղութների վրայ: Նոցա մէջ պէտք է տարածել հայկական ինքնաձանաչութիւն, հայկական լեզուն ու գրականութիւնը, պէտք է շարունակ քարոզել ու համոզել այն բոլորը՝ ինչով նոքա կարող են իրանց սխալն ուղղել. վասն զի լաւ է ուշ՝ քան երբէք:

Հայկական գաղութներում մեծ գործ կարող է շինել հայ հոգևորականութիւնը: Գաղութների հայերը դեռ ևս շատ տաք են դէպի իրանց հոգևորականները, դէպի իրանց սրբավայրերը, ճիշտ նոյն դրութեան մէջ — որպիսին է մեր գիւղերում:

Կրթուած, պատրաստուած քահանան շատ բան կարող է տալ մեր գաղութին: Այս գործող հանգամանքը ինկատի առնելով՝ անհրաժեշտ է, որ մեր գաղութներում լինէին ընտրովի քահանաներ, ժողովրդի առաջադիմութեան նախանձախնդիր հոգևորականներ, ինչպէս և ամեն տեղ մեզանում:

Եթէ ուրուագծենք մեր գաղութի հայ քահանաների պատկերը, շատ ցաւալի հետևանքի կ'հասնենք: Ամեն տեղ, ամեն ժամանակ բիւրօկրատիան գործող է հանդիսանում: Հայկական գաղութներում դուք հանդիպում էք ճեմարանաւարտ քահանաների, բայց ի՞նչ... Այդ մարդիկ իրանց վեհ կոչումը մոռացած, շահասիրական տենդով բռնուած՝ մի մի հաստափոր բիւրօկրատներ, չինովիկներ են, մի մի մատերիալիստ Շէյլօքներ, որոնց ամբողջ էութիւնը դրամ դիզելու, հարստին շփելու, նրա առաջ քննելու մէջ է կայանում: Շատ լաւ կը լինէր, թէ որ էջմիածինը ամենայն տարի ուղարկէր մի կրթուած վարդապետ, որ կարողանար իր իմաստալից քարոզներով համոզել գաղութի հայերին իրանց պարտականութիւնները — օգնել Կովկասի արնաքամ եղած հայ գիւղացիութեան, որով միայն գաղութի հայերը կապուած կ'լինէին հայրենիքի ժողովրդի հետ: Սա մի անհրաժեշտ և շուտ իրագործելու խնդիր է:

Յնչ լիցին ձեզ հայրենիքից կտրուած, հայրենիքից հեռացած հայեր: Դուք մեծամեծ պարտքեր ունիք կատարելու դէպի ձեր հայրենիքը, դէպի ձեր պապերի մամուռած գերեզմանները:

Հարկաւ, ձեզանից շատերը ապահովուած մարդիկ էք, միջոց ունէք ձեր գիւղի, ձեր հայրենիքի ցաւերը յիշելու, գիւղական աղքատ ժողովրդին ձեր լուծման ընծայելու:

Եթէ շրջահայեաց լինէք, եթէ բարի ցանկութիւն ունենաք, անշուշտ, կ'վերակենդանացնէք ձեր հայրենիքը, ձեր ծննդավայրը, ուր հանգչում են ձեր նախնեաց ոսկորները:

Շատ չէ. թո՛ղ ձեզանից իւրաքանչիւրը մի գրագարան բանայ, մի դպրոցի դասագրքեր մատակարարէ, մի աղքատ աշակերտ որդեգրէ, մի չքաւոր դպրոցի ուսուցչի առճիկ տայ և այսպիսի հազար ու մի տեսակ օգնութիւններով կը ծաղկեցնէք ձեր հայրենիքը, որ այնքան մեծ կարիքների ու հոգսերի մէջ է, որ այնքան յետ է մնացել ժամանակից:

Ո՛րքան է հրճուած մարդուս հոգին, երբ կարգում է, որ այս ինչ հարուստը իւր ծննդավայր գիւղին այսքան փող կտակեց: Դուք հիանում էք, դուք սքանչանում էք այդ մարդու արած գործերով:

Յիշեցէք մեր բարեգործներին:

Ձեր աւերակները դուք պէտքէ նորոգէք, ձեր հոգսերին — դուք պէտքէ վերջ տաք:

Յիշեցէք հայի անցեալ փառքը, յիշեցէք Բագրատունեաց մայրաքաղաք Անին, որի աւերակների վրայ բուերն են ողբում զօր և գիշեր:

Անի քաղաքի հայկական ճարտարապետութիւնն ու քանդակագործութիւնը Եւրոպացիների ուշադրութիւնն է դրաւել, այն ինչ դուք, ձեզանից շատերը չգիտէք այդ քաղաքի անունն անգամ: Ո՛հ, սրչափ ապերախտ էք դէ-

պի ձեր անցեալը, դէպի ձեր գրականութիւնն ու պատմութիւնը:

Քնահատեցէք ձեր սեփականութիւնը, պայծառացրէք ձեր կուլտուրական հաստատութիւնները, կենդանի ժամանակ կտակներ արէք և դուք կտեսնէք, որ ձեր ընծայած լուծանքերով ազգը շունչ է առնում, ոտքի կանգնում ու օրհնում. «Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի»:



Գինն է 30 ԿՈՊ.

«Մե հոգսերը» գրքի

Պանոսը գտնուում է կազմողի մօտ

Հասցեն՝ Չարձայ, (Յակաս. օբլ.)

Армянскому священнику Гарегину Асрянцъ

«Ագգային գրադարան»

NL0225351

42.691